ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2003 թվականի դեկտեմբերի 3-ին

ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը սահմանում է հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության կազմակերպման և իրականացման իրավական հիմքերը, սկզբունքները, պետական պահպանություն իրականացնող մարմնի լիազորությունները, գործունեության կարգն ու առանձնահատկությունները, կարգավորում է այդ ոլորտում ծագող հարաբերությունները:

Գ Լ ՈՒ Խ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

պետական պահպանություն՝ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման և պահպանվող օբյեկտների պաշտպանության ոլորտի գործառույթ, որն իրականացվում է իրավական, կազմակերպական, պահպանական, ռեժիմային, օպերատիվ-հետախուզական, տեխնիկական և այլ միջոցառումների համակցության հիման վրա.

պետական պահպանության օբյեկտներ՝ սույն օրենքով հատուկ պետական պաշտպանության ենթակա անձինք.

պահպանվող օբյեկտներ՝ պետական պահպանության օբյեկտների մշտական և ժամանակավոր գտնվելու վայրերի շենքեր, շինություններ, կառույցներ, դրանց հարող տարածքներ, տրանսպորտային միջոցներ, որոնք պահպանության ենթակա են պետական պահպանության օբյեկտների անվտանգությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև պետական պահպանության մարմնի կողմից օգտագործվող շենքեր, շինություններ, կառույցներ, դրանց հարող տարածքներ և տրանսպորտային միջոցներ.

պահպանական միջոցառումներ՝ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման և պահպանվող օբյեկտների պաշտպանության համար պետական պահպանության մարմնի կողմից իրականացվող

գործողությունների համակցություն, այդ թվում՝ ընդգրկելով նաև անվտանգության ապահովման մյուս պետականմարմինները.

անցագրային ռեժիմ՝ պահպանվող օբյեկտներ անձանց, տրանսպորտային միջոցների, իրերի մուտք և ելք կատարելու սահմանված կարգ:

Հոդված 2. Պետական պահպանության իրավական հիմքը

Պետական պահպանությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, սույն օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի հիման վրա:

Հոդված 3. Պետական պահպանության իրականացման հիմնական սկզբունքները

Պետական պահպանությունն իրականացվում է օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության, անընդհատության, քաղաքական ~~անկախության~~չեզոքության, կենտրոնացված ղեկավարման, գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների կիրառման համակցության սկզբունքներով:

Հոդված 4. Պետական պահպանության իրականացման միջոցառումները

Պետական պահպանությունն ապահովվում է հետևյալ միջոցառումների իրականացմամբ.

1) պետական պահպանության օբյեկտների անհատական պահպանության, հատուկ կապի և տրանսպորտային սպասարկման իրականացում, ինչպես նաև նրանց անվտանգությանն սպառնացող վտանգի մասին տեղեկատվության տրամադրում.

2) օրենսդրությանը համապատասխան օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացում.

3) պետական պահպանության օբյեկտների մշտական կամ ժամանակավոր գտնվելու վայրերում հասարակական կարգի պահպանություն և պահպանական միջոցառումների իրականացում.

4) պահպանվող օբյեկտներում՝ սահմանված անցագրային ռեժիմի և կարգի ապահովում:

Գ Լ ՈՒ Խ 2.

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

Հոդված 5. Պետական պահպանության օբյեկտները

1. Պետական պահպանության օբյեկտների շարքին դասվում են սույն օրենքով սահմանված բարձրաստիճան պաշտոնատար անձինք, այն անձինք, որոնց սույն օրենքի համաձայն տրամադրվել է պետական պահպանություն, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և կառավարությունների ղեկավարներն ու այլ անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ժամանակ:

2. Պետական պահպանություն տրամադրվում է՝

1) Հանրապետության նախագահին.

2) վարչապետին.

3) Ազգային ժողովի նախագահին.

4) սույն օրենքի 6.1.-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում՝ վարչապետի թեկնածուին:

Հանրապետության նախագահը, վարչապետը և Ազգային ժողովի նախագահը՝ իրենց պաշտոնավարման ժամանակահատվածում, իսկ վարչապետի թեկնածուն՝ մինչև վարչապետ նշանակման հարցի լուծումը, իրավասու չեն հրաժարվելու պետական պահպանությունից:

~~2. Պետական պահպանություն տրամադրվում է՝~~

~~1) Հայաստանի Հանրապետության Նախագահին.~~

~~2) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին.~~

~~3) Հայաստանի Հանրապետության վարչապետին:~~

~~Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը և Հայաստանի Հանրապետության վարչապետը, իրենց պաշտոնավարման ժամանակահատվածում, իրավունք չունեն հրաժարվելու պետական պահպանությունից:~~

3. Այլ պետական պաշտոնյաներին, հասարակական, քաղաքական, կրոնական և այլ գործիչներին, ինչպես նաև այլ անձանց կարող է պետական պահպանություն տրամադրվել վարչապետի որոշմամբ ~~Հայաստանի Հանրապետության Նախագահի սահմանած կարգով և ժամկետներում~~: Այդ անձանց պահպանությունն իրականացնում է ~~Հայաստանի Հանրապետության Նախագահի~~վարչապետի սահմանած ~~-~~իրավասու պետական մարմինը:

3.1. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչապետի որոշումը ենթակա չէ հրապարակման:

4. Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց կողմից (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց) վարչական զանցանք կամ հանցագործություն (հակաօրինական արարք) կատարվելու դեպքում պետական պահպանություն իրականացնող խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) հատուկ պետական պաշտպանության ենթակա անձին անհապաղ տեղեկացնել, որ պետականպահպանությունը կարող է կասեցվել այդ անձի կողմից հակաօրինական արարք կատարվելու ընթացքում.

2) անհապաղ զեկուցել վարչապետին ենթակա պետական պահպանության ծառայության (այսուհետ՝ լիազոր մարմին)~~լիազոր մարմնի~~ ղեկավարին հետագա պահպանությունը իրականացնելու նպատակահարմարության վերաբերյալ:

Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով իրազեկվելուց հետո հատուկ պետականպահպանության ենթակա անձի կողմից հակաօրինական արարքը շարունակվելու դեպքում պետականպահպանություն իրականացնող խմբի ղեկավարի որոշմամբ այդ արարքի կատարման ընթացքում կարող է կասեցվել պետական պահպանությունը: Նույն կարգով իրազեկվելուց հետո վարչական զանցանք կամ հանցագործություն կրկին կատարվելու դեպքում լիազոր մարմնի ղեկավարի որոշմամբ հատուկ պետականպահպանությունը դադարեցվում է:

5. Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց, կարող են ժամանակավորապես հրաժարվել պետական պահպանությունից՝ այդ մասին գրավոր իրազեկելով լիազոր մարմնի ղեկավարին:

(5-րդ հոդվածը լրաց. 20.03.08 ՀՕ-3-Ն)

Հոդված 6. Հանրապետության նախագահի ~~**Հայաստանի Հանրապետության Նախագահի**~~ **պետական պահպանությունը**

1. Հանրապետության նախագահին, նրա ընտրվելուց հետո, տրամադրվում է պետական պահպանություն ~~Հայաստանի Հանրապետության Նախագահին, նրա ընտրության արդյունքների պաշտոնական հրապարակման պահից, տրամադրվում է պետական պահպանություն՝ նրա մշտական և ժամանակավոր գտնվելու վայրերում՝ սույն օրենքի 4-րդ հոդվածում նախատեսված միջոցառումների լրիվ ծավալով~~:

2. Հանրապետության նախագահի ~~Հայաստանի Հանրապետության Նախագահի~~ պաշտոնավարման ժամանակահատվածում պետականպահպանություն տրամադրվում է նաև նրա հետ համատեղ բնակվող ~~և (կամ)~~ , ինչպես նաև նրան ուղեկցող ընտանիքի անդամներին:

3. Հանրապետության պաշտոնաթող նախագահներին ~~Հայաստանի Հանրապետության պաշտոնաթող Նախագահին~~ տրամադրվում է անձնական ցմահ պետականպահպանություն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հանրապետության պաշտոնաթող նախագահները կարող են ~~Հայաստանի Հանրապետության պաշտոնաթող Նախագահը կարող է~~

ժամանակավորապես կամ ընդմիշտ հրաժարվել պետական պահպանությունից՝ այդ մասին գրավոր իրազեկելով լիազոր մարմնի ղեկավարին:

(6-րդ հոդվածը խմբ. 20.03.08 ՀՕ-3-Ն)

Հոդված 6.1. Վարչապետի պետական պահպանությունը

1. Վարչապետին, նրա նշանակվելուց հետո, տրամադրվում է պետական պահպանություն՝ նրա մշտական և ժամանակավոր գտնվելու վայրերում՝ սույն օրենքի 4-րդ հոդվածում նախատեսված միջոցառումների լրիվ ծավալով:

2. Պետական պահպանություն տրամադրվում է նաև վարչապետի՝

1) Սահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին՝ իր թեկնածությունը Հանրապետության նախագահին ներկայացնելու պահից,

2) Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասին համապատասխան Ազգային ժողովի կողմից ընտրված թեկնածուին՝ վարչապետ ընտրելու որոշումն ընդունվելու պահից:

3. Վարչապետի պաշտոնավարման ժամանակահատվածում պետական պահպանություն տրամադրվում է նաև նրա հետ համատեղ բնակվող, ինչպես նաև նրան ուղեկցող ընտանիքի անդամներին:

4. Պաշտոնաթող վարչապետներին տրամադրվում է անձնական ցմահ պետական պահպանություն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Պաշտոնաթող վարչապետները կարող են ժամանակավորապես կամ ընդմիշտ հրաժարվել պետական պահպանությունից՝ այդ մասին գրավոր իրազեկելով լիազոր մարմնի ղեկավարին:

Հոդված 7. Ազգային ժողովի նախագահի ~~Հայաստանի Հանրապետությունում պետական բարձրաստիճան պաշտոնն եր զբաղեցնող այլ անձանց~~ **պետական պահպանությունը**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին ~~և Հայաստանի Հանրապետության վարչապետին~~ պետական պահպանություն տրամադրվում է նրա~~նց~~ պաշտոնավարման ժամանակահատվածում:

Հոդված 8. Պետական պահպանության ապահովման միջոցառումների իրականացումը

Սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասում, ~~և~~ 6-րդ և 7-րդ հոդվածում նշված անձանց պետական պահպանության ապահովման միջոցառումներն իրականացվում են՝ ելնելով նրանց անվտանգությանն սպառնացող վտանգի բնույթից ու աստիճանից՝ սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

Հոդված 9. Օտարերկրյա պետությունների և կառավարությունների ղեկավարների ու այլ անձանց անվտանգությունը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ժամանակահատվածում օտարերկրյա պետությունների և կառավարությունների ղեկավարների ու նրանց ընտանիքների անդամների պետականպահպանության ապահովման միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև պետական պահպանությունն իրականացնող պետական մարմնի և օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների միջև ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն:

2. Օտարերկրյա պետական այլ պաշտոնյաներին, հասարակական, քաղաքական, կրոնական և այլ գործիչներին, ինչպես նաև այլ անձանց, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ժամանակահատվածում, կարող է տրամադրվել պետական պահպանություն՝ ~~Հայաստանի Հանրապետության Նախագահի սահմանած կարգով և ժամկետներում~~վարչապետի որոշմամբ: Այդ անձանց պահպանությունն իրականացնում է ~~Հայաստանի Հանրապետության Նախագահի~~վարչապետի սահմանած իրավասու պետական մարմինը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչապետի որոշումը ենթակա չէ հրապարակման:

Գ Լ ՈՒ Խ 3.

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆԸ

Հոդված 10. Պետական պահպանություն իրականացնող մարմինը

1. Պետական պահպանությունն իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության պետականպահպանության ծառայությունն է (այսուհետ՝ լիազոր մարմին):

2. Լիազոր մարմինը վարչապետին ենթակա պետական կառավարման համակարգի մարմին է ~~Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի համակարգում գործող ծառայություն է~~:

3. Լիազոր մարմնի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Կառավարությունը:

4. Լիազոր մարմնի կառավարումն իրականացնում է վարչապետը:

5. Լիազոր մարմնի անմիջական ղեկավարումն իրականացնում է լիազոր մարմնի ղեկավարը:

~~3. Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության կառավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:~~

~~4. Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարը:~~

~~5. Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության անմիջական ղեկավարումն իրականացնում է լիազոր մարմնի ղեկավարը:~~

~~Լիազոր մարմնի ղեկավարի պաշտոնն ազգային անվտանգության մարմիններում ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն է:~~2

6. Պետական պահպանության առանձին օբյեկտի պահպանությունն անմիջականորեն ղեկավարում է պետական պահպանության օբյեկտի պահպանության ղեկավարը:

~~7. Լիազոր մարմնի ղեկավարին նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:~~

~~8. Լիազոր մարմնի սպայական կոչումներով (բացառությամբ կրտսեր սպայականի) համալրվող պաշտոններում նշանակումներ կատարում և այդ ծառայողներին կոչումներ շնորհում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարը՝ լիազոր մարմնի ղեկավարի ներկայացմամբ:~~

~~Լիազոր մարմնի կրտսեր սպայական և ենթասպայական կոչումներով համալրվող պաշտոններում նշանակումներ կատարում և այդ ծառայողներին կոչումներ շնորհում է լիազոր մարմնի ղեկավարը:~~

9. Լիազոր մարմնի կանոնադրությունը, կառուցվածքը, ծառայողների և քաղաքացիական անձնակազմի թվաքանակը հաստատում է ~~Հայաստանի Հանրապետության Նախագահը~~վարչապետը:

10. Պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովմանը և պահպանվող օբյեկտների պաշտպանությանը, ~~օրենսդրությամբ~~ օրենքով ամրագրված իրենց լիազորությունների սահմաններում, մասնակցում են նաև անվտանգության ապահովման մյուս պետական մարմինները:

Հոդված 11. Լիազոր մարմնի հիմնական խնդիրները

Լիազոր մարմնի հիմնական խնդիրներն են՝

1) պետական պահպանության օբյեկտներին սպառնացող վտանգը կանխատեսելը և բացահայտելը, այդ սպառնալիքների կանխարգելման համար համալիր միջոցառումներ իրականացնելը.

2) պետական պահպանության օբյեկտների անվտանգությունն ապահովելը նրանց մշտական կամ ժամանակավոր գտնվելու վայրում, այդ թվում՝ երթևեկության ժամանակ.

3) իրենց իրավասության շրջանակներում համապատասխան կապի կազմակերպումը և իրականացումն ապահովելը.

4) իրենց իրավասության շրջանակներում ահաբեկչության դեմ պայքարին մասնակցելը.

5) պահպանվող օբյեկտները պաշտպանելը.

6) պահպանվող օբյեկտներում հանցագործությունները և այլ իրավախախտումները բացահայտելը, կանխելը և խափանելը.

7) պահպանվող օբյեկտներում սահմանված անցագրային ռեժիմը և կարգն ապահովելը:

Հոդված 12. Լիազոր մարմնի պարտականությունները

Լիազոր մարմինը պարտավոր է՝

1) բացահայտել, կանխել և խափանել պետական պահպանության օբյեկտների և պահպանվող օբյեկտների դեմ ուղղված հակահիրավական ոտնձգությունները.

2) կազմակերպել և իրականացնել պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովմանն ուղղված պահպանական, ռեժիմային, տեխնիկական և այլ միջոցառումներ.

3) ապահովել պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման համար անհրաժեշտ հասարակական կարգի պահպանումը նրանց մշտական կամ ժամանակավոր գտնվելու վայրերում,
վերացնել պետական պահպանության իրականացմանը խոչընդոտող արգելքները.

4) անհրաժեշտության դեպքում ապահովել այն ավտոտրանսպորտային միջոցի ուղեկցումը, որով երթևեկում են պետական պահպանության օբյեկտները.

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպել և իրականացնել իր գործունեության համար անհրաժեշտ կապի համակարգի զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, ապահովել դրանց հուսալիությունը, տեղեկատվական անվտանգությունը և օպերատիվությունը.

6) իրականացնել ծածկագրային աշխատանքներ.

7) իրականացնել իր գործունեության տեղեկատվական-վերլուծական ապահովումը.

8) կազմակերպել և իրականացնել պետական պահպանության բնագավառի մասնագետների պատրաստում, ծառայողների վերապատրաստում և որակավորման բարձրացում.

9) ապահովել սեփական անվտանգությունը.

10) համապատասխան մարմինների հետ համագործակցելով՝ իրականացնել միջոցառումներ՝ պահպանվող օբյեկտների տեխնիկական միջոցներից տեղեկատվական արտահոսքը կանխելու համար.

11) իր իրավասության սահմաններում համագործակցություն իրականացնել օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, իրավապահ մարմինների և համապատասխան կազմակերպությունների հետ:

Հոդված 13. Լիազոր մարմնի իրավունքները

Լիազոր մարմինը պետական պահպանություն իրականացնելու նպատակով իրավունք ունի՝

1) անվտանգության ապահովմանն ուղղված պահպանական միջոցառումների նախապատրաստման և իրականացման նպատակով ներգրավել անհրաժեշտ ուժեր և միջոցներ.

2) օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենսդրությանը համապատասխան, իր լիազորության շրջանակներում, իրականացնել օպերատիվ-հետախուզական գործունեություն.

3) պետական պահպանության օբյեկտների մշտական կամ ժամանակավոր գտնվելու վայրերում, պահպանվող օբյեկտներում կազմակերպել և իրականացնել օպերատիվ տեխնիկական զննումներ, իսկ համապատասխան ծառայությունների ներգրավմամբ՝ նաև սանիտարահիգիենիկ, ռադիացիոն և հակահամաճարակային վերահսկողություն.

4) պահպանվող օբյեկտներ մուտք և ելք կատարելու ժամանակ ստուգել պաշտոնատար անձանց և քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերը, կատարել նրանց, ինչպես նաև նրանց մոտ գտնվող իրերի, նրանց տրանսպորտային միջոցների և դրանցով տեղափոխվող իրերի զննում, այդ թվում՝ կիրառելով տեխնիկական միջոցներ.

5) կատարել փաստերի և իրադարձությունների փաստաթղթավորում, լուսանկարում, ձայնագրում և տեսանկարահանում.

6) ձերբակալել և համապատասխան մարմիններին հանձնել պետական պահպանության օբյեկտների ժամանակավոր կամ մշտական գտնվելու վայրերում իրավախախտումներ կամ իրավախախտման փորձ կատարած այն անձանց, ովքեր խոչընդոտել են պետական պահպանության մարմնի օրինական պահանջների կատարմանը, ինչպես նաև ապօրինաբար մուտք են գործել կամ փորձ են արել ապօրինաբար մուտք գործել պահպանվող օբյեկտներ.

7) պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին միջնորդել՝ վերացնելու պետական պահպանության օբյեկտների և պահպանվող օբյեկտների անվտանգությանն սպառնացող պատճառները և պայմանները.

8) անարգել մուտք գործել բնակելի տարածքներ, շենքեր, շինություններ, հողամասեր, եթե հապաղումը կարող է սպառնալիք առաջացնել պետական պահպանության օբյեկտների անվտանգության համար:

Եթե սույն կետով նախատեսված գործողությունները կատարվել են քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց կամքին հակառակ՝ զուգորդվելով այդ

անձանց ազատությունից զրկելով, ապա լիազոր մարմինն այդ մասին 24 ժամվա ընթացքում տեղյակ է պահում տվյալ տարածքի դատախազին.

9) անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկել տրանսպորտային միջոցների և հետիոտնի երթևեկությունը ժամանակավորապես սահմանափակելու ուղղությամբ, արգելել տրանսպորտային միջոցների և քաղաքացիների գտնվելը որոշակի վայրերում և օբյեկտներում, ինչպես նաև տեղափոխել տրանսպորտային միջոցներն այդ վայրերից.

10) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից անվճար ստանալ իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն.

11) իրականացնել ծածկագրային աշխատանքներ.

12) թույլատրել լիազոր մարմնի ծառայողներին՝ օրենքով սահմանված կարգով պահել, կրել, օգտագործել հրազեն և հատուկ միջոցներ.

13) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցել.

14) ապահովել սեփական անվտանգությունը.

15) օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, իրավապահ մարմինների և կազմակերպությունների հետ իր իրավասության շրջանակներում փոխանակել օպերատիվ տեղեկատվություն, հատուկ տեխնիկական և այլ միջոցներ, ինչպես նաև պայմանավորվել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման կարգի և պայմանների մասին.

16) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցել իր իրավասությանը վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նախագծերի մշակմանը և կնքել միջգերատեսչական պայմանագրեր:

Հոդված 14. Լիազոր մարմնի համագործակցությունը Հայաստանի Հանրապետության կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների հետ

1. Լիազոր մարմինը պետական պահպանության օբյեկտների անվտանգությունն ապահովում է՝ համագործակցելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ:

2. Լիազոր մարմինն իր իրավասության շրջանակներում կազմակերպում է անվտանգության ապահովման պետական մարմինների հետ համագործակցությունը և համակարգում է նրանց գործունեությունը պետականպահպանության ոլորտում:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են աջակցել լիազոր մարմնին՝ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման խնդրում:

4. Լիազոր մարմնի համագործակցությունն օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, իրավապահ մարմինների և կազմակերպությունների հետ իրականացվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և փոխադարձ պայմանավորվածությունների հիման վրա:

Հոդված 15. Լիազոր մարմնի մասին տեղեկությունների պաշտպանվածությունը

Լիազոր մարմնում պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանությունն իրականացվում է պետական և ծառայողական գաղտնիքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Գ Լ ՈՒ Խ 4.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆՈՒՄ, ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 16. Ծառայությունը լիազոր մարմնում

1. Լիազոր մարմինը համալրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի զինծառայողներով և քաղաքացիական անձնակազմով:

Լիազոր մարմնի սպաները և ենթասպաներն ~~ազգային անվտանգության մարմինների~~ զինծառայողներ են և զինվորական ծառայությունն անցնում են զինվորական ծառայությունը և ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը կարգավորող օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

Լիազոր մարմնի քաղաքացիական անձնակազմի ծառայությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և լիազոր մարմնում աշխատանքային առանձնահատկություններ սահմանող իրավական ակտերով:

2. Ծառայողական պարտականությունները կատարելիս լիազոր մարմնի ծառայողի՝ իր իրավասության սահմաններում առաջադրած պահանջների կատարումը պարտադիր է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների համար:

3. Ծառայողական պարտականությունները կատարելիս լիազոր մարմնի ծառայողի օրինական պահանջները չկատարելը ~~և (կամ)~~կամ նրա

պարտականությունների կատարմանը խոչընդոտելն առաջացնում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

4. Լիազոր մարմնի ծառայողների մասնագիտական պատրաստումը, վերապատրաստումը և որակավորման բարձրացումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

5. Լիազոր մարմնի զինծառայողների միասնական համազգեստի և տարբերանշանների նկարագիրը հաստատում է ~~Հայաստանի Հանրապետության կառավարությունը~~վարչապետը:

«Հոդված 16.1. Լիազոր մարմնի ծառայողների պաշտոնների խմբերը

1. Լիազոր մարմնի ծառայողների պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) լիազոր մարմնի ծառայողների բարձրագույն պաշտոններ՝

ա. լիազոր մարմնի ղեկավար,

բ. լիազոր մարմնի ղեկավարի առաջին տեղակալ.

2) լիազոր մարմնի ծառայողների գլխավոր պաշտոններ՝

ա. լիազոր մարմնի ղեկավարի տեղակալներ.

բ. ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների պետեր և նրանց տեղակալներ,

3) լիազոր մարմնի ծառայողների ավագ պաշտոններ՝ ոչ ինքնուրույն ստորաբաժանումների պետեր և նրանց տեղակալներ,

4) լիազոր մարմնի ծառայողների միջին պաշտոններ՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ և 5-րդ կետերում չընդգրկված պաշտոններ.

5) լիազոր մարմնի ծառայողների կրտսեր պաշտոններ՝ ենթասպաներով համալրվող պաշտոններ:

2. Լիազոր մարմնի ծառայողների պաշտոնների գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերը կարող են բաժանվել ենթախմբերի:

Հոդված 16.2. Լիազոր մարմնի ծառայողների զինվորական կոչումները

1. Լիազոր մարմնի ծառայողներին, որպես զինծառայողների, շնորհվում են զինվորական կոչումներ: Լիազոր մարմնում սահմանվում են սպաների և ենթասպաների հետևյալ կազմերն ու կոչումները.

Ծառայողների կազմերը	Կոչումները
Ենթասպայական	ենթասպա, ավագ ենթասպա
Սպայական	

կրտսեր սպաներ	լեյտենանտ ավագ լեյտենանտ կապիտան
ավագ սպաներ	մայոր փոխգնդապետ գնդապետ
բարձրագույն սպաներ	գեներալ-մայոր գեներալ-լեյտենանտ

2. Լիազոր մարմնի ծառայողների բարձրագույն սպայական կոչումները շնորհում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ՝ սույն օրենքի 16.6-րդ հոդվածով սահմանված կարգով:

3. Լիազոր մարմնի ծառայողների ավագ և կրտսեր սպայական, ինչպես նաև ենթասպայական կոչումները շնորհում է լիազոր մարմնի ղեկավարը:

Հոդված 16.3. Լիազոր մարմնի ծառայողների պաշտոնների խմբերին համապատասխանող կոչումները

1. Լիազոր մարմնի ծառայողների բարձրագույն պաշտոններին համապատասխանող կոչումների վերին սահմանը գեներալ-լեյտենանտի կոչումն է:

2. Լիազոր մարմնի ծառայողների գլխավոր պաշտոններին համապատասխանող կոչումների վերին սահմանը՝

1) լիազոր մարմնի ղեկավարի տեղակալների համար՝ գեներալ-մայորի կոչումն է,

2) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների պետերի և նրանց տեղակալների համար՝ գնդապետի կոչումն է:

3. Լիազոր մարմնի ծառայողների ավագ պաշտոններին համապատասխանող կոչումների վերին սահմանը փոխգնդապետի կոչումն է:

4. Լիազոր մարմնի ծառայողների միջին պաշտոններին համապատասխանող կոչումների վերին սահմանը մայորի կոչումն է:

5. Լիազոր մարմնի ծառայողների կրտսեր պաշտոններին համապատասխանող կոչումների վերին սահմանը ավագ ենթասպայի կոչումն է:

6. Լիազոր մարմնի ղեկավարը, կախված ավագ, միջին և կրտսեր պաշտոնների խմբերի ենթախմբերից, սահմանում է նշված խմբերի կոնկրետ պաշտոններին համապատասխանող կոչումների ներքին և վերին սահմանները:

7. Լիազոր մարմնի ծառայողների բարձրագույն և գլխավոր պաշտոնների խմբերի կոնկրետ պաշտոնին համապատասխանող կոչումների ներքին և վերին սահմանները սահմանում է վարչապետը:

Հոդված 16.4. Ծառայության անցնելու համար ներկայացվող պահանջները

1. Լիազոր մարմնում ծառայության կարող է ընդունվել Հայաստանի Հանրապետության մինչև 30 տարեկան (բացառությամբ տեղափոխվածների) այն չափահաս քաղաքացին, ով անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների, բարձրագույն ուսումնական հաստատություններ ավարտած այն անձանց, ովքեր ուսման ընթացքում անցել են զինվորական պատրաստություն և հանձնել սահմանված քննությունները, ինչպես նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածում նշված և պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած և պահեստազորում գրանցված անձանց), տիրապետում է հայերենին, իր գործնական, անձնական, բարոյական հատկանիշներով, կրթությամբ, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստականությամբ ունակ է կատարելու լիազոր մարմնի ծառայողի պարտականությունները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

2. Լիազոր մարմնի առանձին պաշտոններում ծառայության անցնելու համար լիազոր մարմնի ղեկավարի թույլտվությամբ բացառիկ դեպքերում կարող են ծառայության ընդունվել 30-ից ավելի բարձր տարիք ունեցող քաղաքացիներ:

3. Լիազոր մարմնի ծառայության անցնելու համար թեկնածուների ընտրության, ուսումնասիրման կարգը, ինչպես նաև նրանց ներկայացվող մասնագիտական, ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:

4. Լիազոր մարմնում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար.

4) չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին.

5) ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում.

6) միաժամանակ հանդիսանում է այլ պետության քաղաքացի:

Հոդված 16.5. Ծառայության ժամկետները

1. Լիազոր մարմնում ծառայության համար սահմանվում են հետևյալ տարիքային սահմանափակումները.

Կոչումը	Ծառայության սահմանային

	տարիքը
Ենթասպայական կազմ ենթասպա, ավագ ենթասպա	50
Սպայական կազմ Կրտսեր սպայական կազմ լեյտենանտ, ավագ լեյտենանտ, կապիտան	50
Ավագ սպայական կազմ մայոր, փոխգնդապետ, գնդապետ	50 55
Բարձրագույն սպայական կազմ գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտ	65

2. Սահմանային տարիքի հասած ծառայողների՝ լիազոր մարմնում ծառայության ժամկետները տվյալ պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը բացառիկ դեպքերում կարող է երկարաձգել մինչև 5 (դասախոսական կազմինը և բժշկական, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ավագ սպայական կազմի ծառայողներինը՝ մինչև 10) տարի ժամկետով:

Հոդված 16.6. Լիազոր մարմնի ծառայողին պաշտոնի նշանակելու պայմանները

1. Լիազոր մարմնի ղեկավար կարող է նշանակվել լիազոր մարմնի այն ծառայողը, ով մինչև նշանակումն զբաղեցրել է լիազոր մարմնի ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն կամ առնվազն 3 տարի զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր կոչում:

2. Լիազոր մարմնի ղեկավարի առաջին տեղակալ կարող է նշանակվել լիազոր մարմնի այն ծառայողը, ով մինչև նշանակումն զբաղեցրել է լիազոր մարմնի ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն կամ մինչև նշանակումը առնվազն 3 տարի զբաղեցրել է լիազոր մարմնի ծառայողների գլխավոր խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր կոչում:

3. Լիազոր մարմնի ծառայողների գլխավոր խմբի պաշտոններում ատեստավորման արդյունքում կարող են նշանակվել այն ծառայողները, ովքեր մինչև նշանակումը վերջին մեկ տարին զբաղեցրել են լիազոր մարմնի ծառայողների գլխավոր խմբի այլ պաշտոն կամ մինչև նշանակումը վերջին երեք տարին զբաղեցրել են լիազոր մարմնի ծառայողների ավագ խմբի որևէ պաշտոն:

4. Լիազոր մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում կարող է նշանակվել նաև լիազոր մարմնի ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցրած ծառայողը:

5. Սույն մասի առաջին պարբերությամբ նախատեսված ատեստավորման պահանջը չի տարածվում լիազոր մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվող ծառայողի վրա:

6. Լիազոր մարմնի ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է ատեստավորման արդյունքում՝ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո:

7. Լիազոր մարմնի ծառայողների կրտսեր խմբի պաշտոններում նշանակումները կատարվում են առանց ատեստավորման:

8. Լիազոր մարմնի ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում նշանակումը կատարվում է միմիայն բարձրագույն կրթության առկայության դեպքում:

9. Լիազոր մարմնի ծառայողների կրտսեր խմբերի պաշտոններում նշանակումը կատարվում է առնվազն միջնակարգ կրթության առկայության դեպքում:

10. Պետական լիազոր մարմնում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել նաև զինված ուժերի, ազգային անվտանգության մարմինների, ոստիկանության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, քրեակատարողական ծառայության մարմինների, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության և արդարադատության նախարարության պետական ծառայողներ, դատախազներ, ինչպես նաև լիազոր մարմնի պահեստազորի սպաներ, որոնք բավարարում են տվյալ պաշտոնին նշանակվելու համար լիազոր մարմնի ծառայողներին ներկայացվող պահանջները:

11. Սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված պետական մարմինների և լիազոր մարմնի պաշտոնների համապատասխանությունը սահմանում է ՀՀ կառավարությունը:

12. Լիազոր մարմնի ծառայողը կարող է նշանակվել առաջին պաշտոնի, բարձր պաշտոնի, հավասար պաշտոնի և ցածր պաշտոնի:

Հոդված 16.7. Լիազոր մարմնի ծառայողների նշանակումը և ազատումը

1. Լիազոր մարմնի ղեկավարը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան:

2. Լիազոր մարմնի ղեկավարի տեղակալներին (այդ թվում՝ առաջին տեղակալին) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը՝ լիազոր մարմնի ղեկավարի ներկայացմամբ:

3. Լիազոր մարմնի ծառայողների գլխավոր (բացառությամբ լիազոր մարմնի ղեկավարի տեղակալների), ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոնների

ծառայողներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազոր մարմնի ղեկավարը:

Հոդված 16.8. Լիազոր մարմնի ծառայողներին բարձրագույն սպայական կոչում շնորհելը

1. Լիազոր մարմնի ծառայողներին բարձրագույն սպայական կոչում շնորհում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ:

2. Վարչապետի առաջարկությանը կցվում է համապատասխան կոչում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը:

3. Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությունն ստանալուց հետո եռօրյա ժամկետում, ստորագրում է առաջարկությանը կցված հրամանագրի նախագիծը կամ այն առարկություններով վերադարձնում է վարչապետին:

4. Եթե վարչապետը հնգօրյա ժամկետում չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Հանրապետության նախագահը՝ հնգօրյա ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, ստորագրում է հրամանագիրը կամ դիմում է Սահմանադրական դատարան:

5. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում վարչապետի կողմից Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկությունը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում հրամանագիր է ընդունում՝ համապատասխան կոչում շնորհելու վերաբերյալ:

6. Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված պահանջները, ապա համաձայն Սահմանադրության 139-րդ հոդվածի՝ կոչումը շնորհված է համարվում իրավունքի ուժով՝ սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված եռօրյա ժամկետի ավարտին հաջորդող օրվանից, որի մասին վարչապետը գրավոր հայտարարություն է տարածում: Գրավոր հայտարարությունը ստորագրվում է վարչապետի կողմից և հրապարակվում Կառավարության պաշտոնական կայքէջում:

Հոդված 16.9. Լիազոր մարմնի ծառայողի արձակուրդը

1. Լիազոր մարմնի ծառայողին վարձատրության պահպանմամբ տրվում են՝

1) հերթական (ամենամյա) արձակուրդ.

2) ուսումնական արձակուրդ.

3) լրացուցիչ (կարճաժամկետ) արձակուրդ.

4) հիվանդության պատճառով արձակուրդ.

5) կին ծառայողներին՝ նախածննդյան և հետծննդյան, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդ:

2. Լիազոր մարմնի ծառայողներին տրվում է նաև օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ արձակուրդ:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերում նշված արձակուրդները ծառայողի հերթական արձակուրդում չեն հաշվվում:

4. Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված արձակուրդների տրամադրման կարգը սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:

Հոդված 16.10. Հերթական արձակուրդը

1. Հերթական արձակուրդի տևողությունը սահմանվում է՝

1) մինչև 15 օրացուցային տարի ծառայած ծառայողների համար՝ 30 օր.

2) 15-25 օրացուցային տարի ծառայած ծառայողների համար՝ 40 օր.

3) 25 և ավելի օրացուցային տարի ծառայած ծառայողների համար՝ 45 օր:

2. Հերթական արձակուրդից ծառայողին հետ կանչելը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, արձակուրդ տրամադրող պաշտոնատար անձի հրամանով: Այդ դեպքում արձակուրդի չօգտագործած օրերը տրամադրվում են նույն տարում, եթե դրանք կազմում են 15 օր և ավելի: Արձակուրդի չօգտագործած օրերը ծառայողի ցանկությամբ միացվում են հաջորդ տարվա հերթական արձակուրդի օրերին:

3. Հերթական արձակուրդի ժամանակը որոշելիս նախապատվությունը տրվում է՝

1) մարտական գործողությունների մասնակիցներին.

2) մինչև 16 տարեկան 3 և ավելի երեխա ունեցողներին.

3) հաշմանդամ կին կամ երեխա ունեցողներին:

4. Հերթական արձակուրդի ընթացքում հիվանդացած ծառայողի արձակուրդը երկարաձգվում է հիվանդության պատճառով չօգտագործված օրերի թվով՝ հիմք ընդունելով բուժող բժշկի և բուժհիմնարկի պետի (գլխավոր բժշկի) համապատասխան տեղեկանքը:

Սույն մասում նշված տեղեկանքն այլ բուժհիմնարկի կողմից տրվելու դեպքում հավաստվում է լիազոր մարմնի կողմից:

5. Լիազոր մարմնի ծառայողների ծառայության ընդունվելու և ծառայությունից արձակվելու տարում հերթական արձակուրդը հաշվարկվում է օրենքով հասանելիք արձակուրդի ընդհանուր տևողությունը տասներկուսի բաժանելու և ստացված օրերը լրիվ ծառայած ամիսների թվով բազմապատկելու միջոցով: Ընդ որում, ոչ լրիվ ամիսներն ու օրերը կլորացվում են ավելացման եղանակով:

6. Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում լիազոր մարմնի ծառայողի արձակուրդն ընդհատվում է, բացառությամբ կին ծառայողի՝ նախածննդյան և հետծննդյան, ինչպես նաև երեխայի խնամքի արձակուրդի:

Հոդված 16.11. Ուսումնական արձակուրդը

1. Բարձրագույն ուսումնական հաստատություններում հեռակա ուսուցման ձևով օրենքով սահմանված կարգով սովորող լիազոր մարմնի ծառայողներին (այդ թվում՝ ասպիրանտներին, դոկտորանտներին) տրվում է ուսումնական արձակուրդ՝ ուսումնաքննական ժամկետներին համապատասխան:

Հոդված 16.12. Լրացուցիչ (կարճաժամկետ) արձակուրդը

1. Լրացուցիչ արձակուրդը տրվում է՝

1) ծառայողների սոցիալական ապահովության հարաբերությունները կարգավորող օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ու տևողությամբ.

2) ընտանեկան պայմաններից ելնելով և հարգելի այլ պատճառներով՝ մինչև 10 օր տևողությամբ:

Հոդված 16.13. Հիվանդության պատճառով արձակուրդը

1. Լիազոր մարմնի ծառայողին հիվանդության պատճառով արձակուրդ տրվում է ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

2. Ծառայողին հիվանդության պատճառով տրվում է արձակուրդ մինչև 60 օր տևողությամբ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նախատեսված դեպքերի:

3. Բուժման և հիվանդության պատճառով տրված արձակուրդում անընդմեջ գտնվելու ժամանակը, ընդհանուր առմամբ, չպետք է անցնի 4 ամսից, բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին հիվանդությունների բուժմանհամար օրենսդրությամբ սահմանվում են ավելի երկար ժամկետներ:

Սույն մասում նշված ժամկետը կարող է երկարաձգել լիազոր մարմնի ղեկավարը՝ բժշկականհիմնարկի եզրակացության հիման վրա:

4. Բուժման կամ հիվանդության պատճառով տրված արձակուրդի անընդմեջ ժամկետն ավարտվելուց հետո ծառայողը ենթակա է ռազմաբժշկական հանձնաժողովի հետազոտման՝ հետագա ծառայությունը շարունակելու հնարավորությունը որոշելու համար:

Հոդված 16.14. Նախածննդյան, հետծննդյան և երեխայի խնամքի համար արձակուրդը

1. Լիազոր մարմնի կին ծառայողին նախածննդյան, հետծննդյան, ինչպես նաև երեխայի խնամքի համար տրվում է արձակուրդ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Նախածննդյան, հետծննդյան, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդը հաշվարկվում է կին ծառայողի անընդհատ ծառայության ստաժում՝ պաշտոնային դրույքաչափը սահմանելու, միանվագ դրամականպարգևատրման և կենսաթոշակ հաշվարկելու համար:

3. Երեխայի խնամքի համար տրված արձակուրդի ընթացքում կին ծառայողի պաշտոնը պահպանվում է:

4. Նախածննդյան և հետծննդյան տարում կին ծառայողին հերթական արձակուրդ տրվում է ընթացիկ տարվա արձակուրդի տևողությամբ, երեխայի խնամքի համար արձակուրդն ավարտվելու տարում՝ ավարտվելու օրվանից համամասնաբար, մինչև օրացուցային տարվա ավարտը՝ ծառայության յուրաքանչյուր լրիվ ամսվա դիմաց երկուսուկես օր հաշվարկով:

Հոդված 17. Լիազոր մարմնի ծառայողների պատասխանատվությունը

1. Լիազոր մարմնի ծառայողն իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար ենթարկվում է պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության ~~օրենսդրությամբ~~ օրենքով սահմանված կարգով:

2. Լիազոր մարմնի ծառայողի որոշումները, գործողությունները կամ անգործությունը ~~անօրինական գործողությունները~~ կարող են բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով:

Հոդված 18. Լիազոր մարմնի ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածությունը

Լիազոր մարմնի ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածությունն իրականացվում է զինծառայողների ~~ազգային անվտանգության մարմիններում ծառայողների~~ և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության հարաբերությունները կարգավորող օրենսդրությանը համապատասխան:

Գ Լ ՈՒ Խ 5.

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺԻ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հոդված 19. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման պայմանները

1. Լիազոր մարմնի ծառայողներն իրավունք ունեն ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրել սույն օրենքով նախատեսված կարգով և

դեպքերում, եթե այլ միջոցներ չեն ապահովում լիազոր մարմնի վրա դրված պարտականությունների կատարումը:

Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և (կամ) զենք գործադրելու ընտրություն կատարելիս լիազոր մարմնի ծառայողն առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից և իրավախախտի անձից:

2. Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և (կամ) զենք գործադրելիս լիազոր մարմնի ծառայողը պարտավոր է՝

1) նախազգուշացնել դրանք օգտագործելու մասին՝ անձին բավարար ժամանակ տրամադրելով իր պահանջների կատարման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հապաղումն անմիջական վտանգ է ստեղծում պետական պահպանության օբյեկտների, լիազոր մարմնի կամ պահպանական միջոցառումների անցկացմանը ներգրավված մյուս ծառայողների և այլ անձանց կյանքի կամ առողջության համար, կամ երբ ստեղծված իրադրությունում նման նախազգուշացումն անհնար է.

2) դրանք գործադրել իրավախախտման կամ դիմադրության վտանգավորության բնույթին և աստիճանին համաչափ, ձգտել, որպեսզի իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի.

3) մարմնական վնասվածքներ ստացած անձանց ցույց տալ առաջին օգնություն:

3. Լիազոր մարմնի ծառայողները պատասխանատվություն չեն կրում սույն օրենքով նախատեսված դեպքերում գործադրված ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և (կամ) զենքի կիրառման համար, եթե տվյալ դեպքում չի կատարվել անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության սահմանների անցում կամ հանցագործություն կատարած անձի ձերբակալման համար անհրաժեշտ միջոցառումների գերազանցում:

4. Լիազորությունների գերազանցմամբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և (կամ) հրազենի գործադրումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

~~5. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ զենքի կիրառման յուրաքանչյուր դեպքի մասին լիազոր մարմինն անհապաղ ծանուցում է տվյալ տարածքի դատախազին:~~

Հոդված 20. Ֆիզիկական ուժի գործադրումը

Լիազոր մարմնի ծառայողներն իրավունք ունեն ֆիզիկական ուժ գործադրել հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելման, դրանք կատարած անձանց ձերբակալման, ծառայողների օրինական պահանջների հակազդեցության հաղթահարման համար:

Հոդված 21. Հատուկ միջոցների օգտագործումը

1. Լիազոր մարմնի ծառայողները, անձամբ կամ ստորաբաժանման կազմում ծառայողական պարտականությունները կատարելիս, իրավունք
ունեն հատուկ միջոցներ օգտագործել հետևյալ դեպքերում.

1) պետական պահպանության օբյեկտների վրա հարձակմանը կամ հարձակման վտանգին դիմակայելիս.

2) լիազոր մարմնի ծառայողների և քաղաքացիների անվտանգությունն ապահովող պետական այլ մարմինների ծառայողների վրա հարձակումը կամ հարձակման սպառնալիքը կամ ցույց տրվող դիմադրությունը կանխելիս.

3) պահպանվող օբյեկտների և տրանսպորտային միջոցների վրա հարձակմանը կամ հարձակման վտանգին դիմակայելիս.

4) օրինազանցներին և այլ անձանց ձերբակալելիս, որոնց հանդեպ անհրաժեշտ հիմքեր կան ենթադրելու, որ նրանք հակված են ցույց տալու զինված դիմադրություն կամ խոչընդոտելու լիազոր մարմնի ծառայողների պարտականությունները կատարելուն, ինչպես նաև նրանց համապատասխան մարմիններ բերման ենթարկելիս:

Բացի այդ, հատուկ միջոցներ կարող են օգտագործվել սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:

2. Արգելվում է հատուկ միջոցների գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և ծառայողի կյանքին և առողջությանն իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

3. Անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում հատուկ միջոցների կամ զենքի բացակայության պայմաններում լիազոր մարմնի ծառայողն իրավունք ունի օգտագործել ձեռքի տակ եղած բոլոր հնարավոր միջոցները:

Հոդված 22. Զենքի կիրառումը և օգտագործումը

1. Լիազոր մարմնի ծառայողները, որպես ծայրահեղ միջոցառում, անձամբ կամ ստորաբաժանման կազմում իրավասու են զենք կիրառել՝

1) պետական պահպանության օբյեկտների կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող հարձակումը կամ հարձակման սպառնալիքը կանխելիս.

2) լիազոր մարմնի ծառայողների և պահպանական միջոցառումների ապահովման համար ներգրավված այլ մարմնի ծառայողների վրա հարձակումը կամ հարձակման սպառնալիքը կանխելիս, եթե նրանց կյանքին և առողջությանը վտանգ է սպառնում, ինչպես նաև նրանց զենքին տիրանալու փորձը կանխելիս.

3) պահպանվող օբյեկտների և տրանսպորտային միջոցների վրա հարձակմանը կամ հարձակման սպառնալիքին դիմակայելիս.

4) պատանդներին ազատելիս, ահաբեկչական և այլ հանցավոր ոտնձգությունները կանխելիս.

5) տրանսպորտային միջոցները վնասելով կանգնեցնելիս, եթե վարորդն իրական վտանգ է ստեղծում պետական պահպանության օբյեկտների կյանքի և առողջության նկատմամբ և չի ենթարկվում ծառայողի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու ազդանշաններին.

6) պետական պահպանության օբյեկտների և այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանն անմիջականորեն սպառնացող կենդանիներին վնասազերծելիս.

7) զենք օգտագործելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տագնապ հայտարարելիս կամ օգնություն կանչելիս:

2. Արգելվում է զենքի գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և ծառայողի կյանքին ու առողջությանն իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

Մերկացրած զենքով ձերբակալում կատարող լիազոր մարմնի ծառայողին մոտենալու (նրա կողմից պահանջված հեռավորությունը խախտելու միջոցով), առանց թույլտվության անսպասելի կտրուկ շարժում կատարելու, ձեռքերը գրպանները տանելու կամ զենքին ձեռք մեկնելու՝ ձերբակալվողի ցանկացած փորձ լիազոր մարմնի ծառայողին իրավունք է տալիս առանց նախազգուշացման՝ զենք գործադրել օրենքով սահմանված կարգով:

Զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին լիազոր մարմնի ծառայողը պարտավոր է զեկուցել իր անմիջական ղեկավարին:

Գ Լ ՈՒ Խ 6.

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հոդված 23. Լիազոր մարմնի ֆինանսավորումը

Լիազոր մարմնի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ սահմանված այլ միջոցների հաշվին:

Լիազոր մարմնի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսվում է հատուկհոդված:

Հոդված 24. Լիազոր մարմնի նյութատեխնիկական և այլ ապահովումը

Լիազոր մարմնի նյութատեխնիկական ապահովումը, ծառայողների և քաղաքացիական անձնակազմի բնակարանային, կենցաղային, սննդի, նյութական օգնության, խրախուսման և սոցիալական այլ պահանջմունքների բավարարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ սահմանված այլ միջոցների, այդ թվում՝ պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցելու դիմաց ստացվող միջոցների հաշվին:

Գ Լ ՈՒ Խ 7.

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 25. Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության իրավահաջորդությունը

Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայությունը Հայաստանի Հանրապետության Նախագահի և բարձրաստիճան պաշտոնատար այլ անձանց անվտանգության ապահովման վարչության իրավահաջորդն է:

Հոդված 26. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հուլիսի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ **Ռ. Քոչարյան**

2003 թ. դեկտեմբերի 23
Երևան
ՀՕ-40-Ն